ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» նոյեմբերի 2012թ. N__-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Արցախյան պատերազմի ազատամարտիկ Հայկ Խաչատրյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/2 շենքի ճակատային հատվածում տեղադրելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման համար հիմք է հանդիսանում Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի միջնորդությունը, հաշվի առնելով վարչական շրջանի բնակիչների դիմում-խնդրանքը՝ Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/2 շենքի ճակատային հատվածում Արցախյան պատերազմի ազատամարտիկ Հայկ Արարատի Խաչատրյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակ տեղադրելու մասին:

Հայկ Խաչատրյանը ծնվել է 1976 թվականին:

Նա 16 տարեկանում մասնակցել է Ղարաբաղում տեղի ունեցող մարտերին, եղել է Ասկերանի, իսկ հետո Լեոնիդ Ազգալդյանի և Վլադիմիր Բալայանի կողմից ստեղծված կամավորական ջոկատներում, մասնակցել է Քելբաջարի, Կուբաթլուի և Մարտակերտի շրջանի գյուղերի ազատագրման պայքարին:

Հայկ Արարատի Խաչատրյանը զոհվել է 1993 թվականի դեկտեմբերի 26-ին, Մատաղիս գյուղի ազատագրման գործողությունների ժամանակ:

2003 թվականին ՀՀ Նախագահի կողմից Հ. Խաչատրյանը հետմահու պարգևատրվել է Արիության մեդալով, իսկ 2010 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի կողմից հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով, նույն թվականին հետմահու պարգևատրվել է ՀՀ ԵԿՄ հուշամեդալով:

Արցախյան պատերազմի ազատամարտիկ Հայկ Խաչատրյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման վերաբերյալ դրական կարծիք է ներկայացվել Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից:

Հաշվի առնելով Հայկ Խաչատրյանի մեծ ավանդն ու ցուցաբերած արիությունն Արցախյան ազատամարտում, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Հայկ Խաչատրյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևանի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայկ Խաչատրյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայկ Խաչատրյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ